

Յաւելեալ մեր Յունուար 31, 1965 թուականին.

Սիրելի Սրբազան Հայր,

Տարեկան Տեղեկագրի հարցարանը լեցնելու վրայ ենք, ամենէն ուշը երկու շաբաթէն կը ղրկենք:

Անդամական ժողովի առիթով յայտնեցինք մեր Հովիւի պաշտօնէն հրաժարումը, որ իր օրու դառնալու է Յուլիս 5էն Սկսեալ 1965:

Յայտնեցինք նաեւ Ձերդ Սրբազնութեան մտադրութիւնը & եռնադրելու Սրկ. Միսաք Բէհեանը Րիչմընտի վրայ:

Միական Խորհուրդը ինչ պաշտօն յանձնած է հրաւիրել Սրկ. Միսաքը Րիչմընտ վարդաւանսց տօնին առթիւ, իր խօսեցեալն ալ միասին, եթէ կարելի է: Եթէ այդ օր անկարելի է, փնկէ ետք բայց ոչ շատ ուշ: Սրկ. Միսաքին պիտի հաղորդենք շուտով:

Իմ հրաժարման նամակս Ձերդ Սրբազնութեան կը ղրկեմ ամսոյս Յին:

Այլապէս ամէն ինչ լաւ կ', ընթանայ այստեղ:

Ձերմօրէն մատչելով Ձերդ Սրբազնութեան Աջոյն

Մնամ խոնարհաբար,
Արզուման Բեգ. Միսաք
ՊՕՂՈՍ ԲՆԳ. ՄԱՆՈՒԿԵԱՆ